ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ՀԱՆԴԷՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 13րդ հրատարակութիւնը է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1898 յունիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հեռևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)։

ԱՄ ՏԱՐԻ ԹԻՒ 58

1898 ՄԱՐՏ 30

1898 ՄԱՐՏ 18 (Հ. Տ.)

ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Կը հրատարակուի Ի. և Նբ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԻ

Համարդրութիւնը, երէք հարկ համարի, հաշուածելով և կատարեալ միայն կը հրատարակէ երեն ղրկուած գրութիւնները։ Գործատուր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միլիմետրը 1 սանտիմարժէ։ 1 գիւտրը 2 սանտիմ։

Les annonces, en français ou en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction : Rue Fortia, 7.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բ. Դրան վարմունքը. — Նամակ Թիւրքիահն (Կ. պոլիս). — Հայոց եւեան փայլը (ոտանաւոր). — Նոր հրատարակութիւններ. — Արմէնիահ պատասխանները. — Տ. Հանօթօ ակադեմական.—Մեծ պետութիւնները, Թիւրքիա եւ Յունաստան. — Թիւրքիահն լուրեր. — Ծայրագոյն-Արեւելքի գործեր. — Սպանիա եւ Միացեալ-Նահանգներ.— Արտասահմանի լուրեր. — Յանուցումներ։

Բ. ԴՐԱՆ ՎԱՐՄՈՒՆՔԸ

Ոչ ոք և ոչինչ կրնայ այնչափ դրդռել Հայ ժողովուրդը Բ. Դրան դէմ, որչափ բուն իսկ իրեն, Բ. Դրան վարմունքը։

Իրաւ է թէ Հայ ժողովուրդը շատ համբերող է. բայց ինչպէս ամեն բան, համբերութիւնն ալ չափ մը կունենայ և երբ համբերութեան բաժակը չափազանց լցուած լինի, ա՛լ կը սկսի թափիլ։

Մի ժամանակէ ի վեր համեմատաբար հանդարտութիւն մը տիրած է Թիւրքիահ մէջ. Հայ ժողովուրդը կը ղգուշանայ թիւրք կառավարութեան դէմ ուժգին շարժումներ անելէ և իր իրաւունքներուն պահանջման ու դրծադրութեան համար իր խնդիրները ու բողոքները ընելով մէկտեղ սպասողական դիրքի մը մէջ կեցած է։

Բայց կերեւի թէ այդ հանդարտ վիճակը Բ. Դրան դրծին չդար. պատրուակներ կուզէ գտնել իր արիւնարբու քաղաքականութիւն շարունակելու համար. ուստի կարծես թէ ամեն չանքեր կընէ Հայ ժողովուրդը իրեն դէմ ղրդռելու, անոր համբերութիւն հատցնելու և իրաւանցում մը հանելու համար։

Իրրև թէ իրատէ հանած էր որ Պատրիարքի մի քանի խնդիրներն ընդունուած և գործադրութեան հրամայուած էին. դաղթականներին թոյլտուութիւն պիտի լինէր Թիւրքիա վերադառնալու, երկու տարի դինուորական տուրքէն ազատ պիտի մնային կոտրածէն ջնասուած քաղաքների Հայ բնակիչները, պիտի թոյլատրուէր որ պատրիարքարանի մէջ մի որբանոց յանձնաժողով հաստատուելով պաշտօնապէս դիմումներ լինէին ամեն կողմ հանգանակութեան համար ի նպաստ որբերին, ընդհանուր արձակում պիտի տրուէր բանտարկուած Հայերին ևայլն ևայլն։

Ոչ միայն այդ խոստումներէ և ոչ մին իրական դարձաւ, այլ Կ. պոլսէն մարտ 28ին հեռագիրը գոյժ կը բերէ թէ 8 Հայեր որոնք վերջերս դատապարտուած էին, կախուեցան. 34 Հայեր ալ՝ որոնցմէ 4ը եկեղեցական են, Կ. պոլիս բերուելով բանտարկուեցան։

Սուլթանի խոստումները և իր կառավարութեան վարմունքը բոլորովին հակասական են. մէկ կողմէ խաղաղութիւն և հանդարտութիւն կը խոստացուի, իսկ միւս կողմէ յուզման և խռովութեան առիթներ կը սերմանուին։

Աւազակները, մարդասպանները որոնք նոյն իսկ թիւրք զօրքերին դէմ կռուելը և անոնց ջնասներ հասուցեր են Մալաթիահ մէջ, կը բռնուին կը բերուին Կ. պոլիս և հոն Սուլթանի շնորհներին արժանանալով պատուհասնչան և դրամ ալ կը ստանան ու կարձակուին։ Իսկ մի քանի խեղճ Հայեր որոնք Մէրսինի մէջ կամ ասդին անդին մի քանի դանգատի խօսք խօսած կը լինին դիրենք ստոփիկ ճնշող ու հարստահարող կառավարութեան վարմունքին դէմ և կամ թէ կարելի է որ այդչափն ալ խօսած չլինին և լոկ կասկածի կամ թշնամութեան զոհ եղած, կը բերուին Կ. պոլիս, հոն կը բանտարկուին և մինչև իսկ կախաղան կը հանուին։

Ի՞նչ անուն պէտք է տալ Հայերին դէմ Բ. Դրան այս տեսակ վարմունքին։

Եւ եթէ Հայ Ժողովրդի համբերութիւնը հատնելով դարձեալ յուզումներ ծագին, ո՞վ կը լինի ատոր պատասխանատուն. Ռո՞սը, Անգլիացի՞ն, Հայ յեղափոխականնե՞րը թէ նոյն իսկ Բ. Դրան վարմունքը։

Պատրիարքարանն ուզելով կիլիկիահ կաթողիկոսական խնդիրը կարգադրել վերջապէս և անխնամ չթողուլ այդ ընդարձակ թեմի հոգևոր վիճակը, դիմում մ'ըրաւ Բ. Դրան, բեկանելով Գեր. Ալէքսեեան եպիսկոպոսի ընտրութիւնը, քանի որ կը տեսնէր թէ Բ. Դուռը կը դժկամակի վաւերացնել անոր ընտրութիւն։ Գործին դիւրութիւն տալու համար, Ալէքսեեան եպիսկոպոսն ինք ալ հրաժարական տուաւ արդէն։

Բայց ի՞նչ կը կարծէք. Բ. Դուռը գնահատե՞ց Պատրիարքարանի այդ հաչտասէր և զիջող քաղաքականութիւնը. ընդհակառակ, վերջին լուրերուն նայելով, Բ. Դուռը աւելի պահանջկոտ դարձեր և հրաման ղրկեր է մեր պատրիարքարան թէ Սիսի կաթողիկոսը Սիսի միաբաններէն պէտք է ընտրուի և ոչ թէ դրսէն։ Արդ ո՛վ հետևաբար Սիսի եպիսկոպոսներին մէջ յարմար մէկը չերեւիր, այդ կերպով կուզէ իր արդէն ապօրինի ընտրել տուած Գազանճեան եպիսկոպոսը բազմեցունել Սիսի աթոռին վրայ։

Ահա այսպէս եղած է Բ. Դրան վարմունքը Հայերին հետ. եթէ զիջանելով խոնարհին, կելնէ զանոնք բեռնաւորելու. իսկ եթէ իրենց ճակատագոյց տան, կելնէ գլուխնին կտրելու։

Այս վիճակի մէջ Հայ ժողովուրդը կամ աշխարհի ամենէն հանդարտ ոնէ ժողովուրդ՝ ի՞նչպիսի զգացում կրնայ տածել դէպի մի կառավարութիւն որի յատկանիշներն են ծայրայեղ ճնշողութիւն, կեղծաւորութիւն, խաբեբայութիւն և արիւնաներկ քաղաքականութիւն։

Հիմա նորէն կը հարցնենք. Հայերի յուզման և խռովութեան բուն պատճառը դրսե՞ն գրգռիչներ են աւելի թէ նոյն իսկ Բ. Դրան վարմունքը։

Մ. Փ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

(Թղթակցութիւն «Միւնիխի»ի)

Կ. պոլիս, 18 մարտ

Կ. պոլսի դեսպանական բոլոր շրջանակները չարժման մէջ են։ Նախ և առաջ՝ փոքր տէրութիւնների դեսպանները են որ մեծ տէրութիւնների դեսպաններին դէմ ելած են. ատոնք կը գանգատին որ մեծ տէրութիւնների դեսպաններն երբեք իրենց խորհրդակցութիւնների մէջ չեն առներ զիրենք, նոյն իսկ երբ այնպիսի խնդիրների վրայ կը լինի խորհրդակցութիւնը որ իրենք ալ անոնց պէս շահ ունին ատոր մէջ։ Հոլանտական դեսպան պարոն վան տեր Մեթաալ վան Բիեբրահիլ որ Շուէտ և Նորվեկիահ դեսպան Մէնեպօք կոմսին այժմ արձակուրդով բացակայ գտնուած միջոցին՝ ինքն է փոքր տէրութիւնների դեսպաններուն երիցագոյնը, Ամերիկահ Միացեալ-Նահանգներուն, Պատիահ և փոքր տէրութիւններուն դեսպանները Հոլանտական դեսպանատունը ժողովի կանչեց, հաւաքաբար մի բողոքագիր խմբագրելու համար վեց տէրութիւններին իրենց խորհրդակցութիւններէ ղերենք դուրս ձգելուն դէմ։ Արդէն այս վէճ 1896ին ալ ծագած էր, Պօլսեցի Եւրոպացիներուն պաշտպանութեան համար դեսպանատուններուն մէկի տեղ երկու պահակներ ունենալու խնդրին առեն։ Իսկ այժմ աւելի խիստ կերպով երեան եկած է, 1896 օգոստոսի կոտորածին առեն ջնասուած օտարահպատակներուն վճարուելիք տուգանքներուն կարգադրուելուն առթով։

Վեց մեծ պետութիւններուն դեսպանները որոշեցին որ Յունաստանին Թիւրքիահ վճարելիք պատերազմական տուգանքէն վար գնեն կոտորածէն ջնասուած իրենց ազգակիցներուն պահանջած գումարները։ Բայց Հոլանտա, Յունաստան, Մոնթէնէգրօ և Ռումանիա կըսեն թէ այդ դեպքերուն միջոցին իրենց հպատակներէ ալ ըսպանուած, վիրաւորուած կամ կողոպտուածներ կան։ Ասոնք կը պահանջեն — և պէտք է ըսել թէ իրաւունք ալ ունին — որ իրենք ալ մասնակցին մեծ տէրութիւններուն դեսպանների այդ նկատմամբ ունեցած խորհրդակցութիւններուն որ իրենք ալ այս մասին պէտք եղածը իմացած լինելով ներկայացունեն իրենց պահանջները և գիտնան թէ ի՛նչ միջոցներ ձեռք առնուած են անոնց յանձողովելու համար։ Բայց դիւանագիտական Ոլիմպոսի բարձրագոյն դիք կընդդիմանան ատոր, վախնալով որ այդ մի նախընթաց օրինակ կը լինի որ յետոյ կրնայ մի ցաւալի հարուած տալ իրենց յատուկ դեսպանական արարողութիւններուն։

Մեծ տէրութիւնների դեսպաններն ու միւս տէրութիւնների լիազօր պատուիրակներուն միջև չէ միայն որ երկպառակութիւն ծագած է. եւրոպական ներդաշնակութեան երաժշտապետներուն մէջ ալ լնկած է երկպառակութիւնը։ Գժտութեան խնձորն եղած է երկու վալիի (նահանգապետ) և մէկ միւթէսարըֆի (գաւառապետ) նշանակութիւնը, որը դեսպաններէն ոմանք Եւրոպաի դէմ յոխորտանք մը կը համարին, մինչդեռ միւսներն ալ աւելորդ կը համարին այդ առթով Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ՀԱՅԿ» ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԵՏ

Հարգելի ընկերներ, ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա հանդիպելու ձեզ հետ, որովհետև ինձ համար միշտ հաճելի է շփվել գրողների հետ, որոնց ստեղծագործությունները ես կարդում եմ ամենայն ուշադրությամբ։ Ես ինքս էլ մի քանի տարի գրական գործունեություն եմ ծավալել, ուստի ինձ համար հետաքրքրական է ձեր աշխատանքի ձևերը, ձեր ստեղծագործական լաբորատորիան։ Ես ուզում եմ ձեզ հետ կիսել իմ մտքերը, որոնք ծագել են ինձ մոտ ձեր գրքերը կարդալիս։

Ես կարդացել եմ ձեր գրքերը, ինչպես նաև ձեր ստեղծագործությունների մասին գրված հոդվածները։ Ինձ համար պարզ է, որ ձեր գրական ուղին ոչ միանգամայն հեշտ է եղել։ Ձեզ հաջողվել է հաղթահարել ստեղծագործական ճգնաժամը, որը ձեզ մոտ, ինչպես և շատ ուրիշ գրողների մոտ, տեղի է ունեցել 1930-ական թվականների սկզբին։ Ես կարծում եմ, որ ձեր ստեղծագործական ճգնաժամը պայմանավորված է եղել ոչ միայն ձեր անձնական հանգամանքներով, այլև ավելի խոր պատճառներով։ Ձեր ստեղծագործական ճգնաժամը ձեզ մոտ, ինչպես և շատ ուրիշ գրողների մոտ, տեղի է ունեցել 1930-ական թվականների սկզբին։ Ես կարծում եմ, որ ձեր ստեղծագործական ճգնաժամը պայմանավորված է եղել ոչ միայն ձեր անձնական հանգամանքներով, այլև ավելի խոր պատճառներով։

Ձեր գրքերը կարդալիս ես նկատեցի, որ ձեր ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում հայ գյուղացիության կյանքի, նրա պատմության, նրա հոգեբանության ուսումնասիրությունը։ Ես կարծում եմ, որ սա շատ կարևոր է։ Հայ գյուղացիությունը մեր ժողովրդի ամենաբազմամարդ խավն է եղել, և նրա կյանքի, նրա պատմության ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի պատմության, նրա մշակույթի, նրա հոգեբանության ուսումնասիրության համար։ Ես կարծում եմ, որ ձեր ստեղծագործության մեջ գյուղացիության կյանքի, նրա պատմության, նրա հոգեբանության ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի պատմության, նրա մշակույթի, նրա հոգեբանության ուսումնասիրության համար։

Ես ուզում եմ ձեզ հետ կիսել իմ մտքերը ձեր ստեղծագործության մասին։ Ես կարծում եմ, որ ձեր ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում հայ գյուղացիության կյանքի, նրա պատմության, նրա հոգեբանության ուսումնասիրությունը։ Ես կարծում եմ, որ սա շատ կարևոր է։ Հայ գյուղացիությունը մեր ժողովրդի ամենաբազմամարդ խավն է եղել, և նրա

Ժողով կը հասկնայ վերլապէս անոր ըսածի ճշմարտութիւնը։ Եւ Տ.Վալօրիին ապատութիւնկը տրուի իր բերած գրնխով մէկտեղ կընել երթալու որ անշուշտ ինքնիրեն երդում արած կը լինի որ այսուհետև եթէ ունէ տուի իրեն յանձնուի Կ.պոլիս բերելու համար, առալուց մէկը չնայած չընդունի բնաւ։

ՀԱՑՈՒԹԵԱՆ ՓԱՑԸՂԸ

Առ Հայ աղջիկն

Անուշ Հեչտանքի կոհակներ վէտ վէտ
Երակներուս մէջ պարով կուգան խոյս.
Խաղի է ելեր ջերմ հրայրքիս հետ
Գարնան վարդի պէս չքնաղ մի թարմ կոյս։
Ա՜խ, ես կը հալիմ տարփանքէս յամառ
Նաղելի կոյսին սարուածքին ի տես.
Սիրուն ժպիտ մը, աչքեր սիրավառ,
Շքեղ հասակ մը հրեշտակի պէս։
Սրտիս փափկագոյն ծալքերուն մէջտեղ
Պահած եմ սէրս նախանձով մ'ահեղ.
Սակայն կը զգամ, որ էութիւնս ալեւոյժ
Այդ սուրբ մաուանքէս կը ջընցուի յոյժ։

*
* *

Իր մերկ քոյրերու, քաղցր Հայրենեաց
Խեղճ մանուկներու տառապանքէն խոր,
Խոշտանգի, դաւի պատկերն խոշոր
Ինքնիշ էակը սառատիկ զարհուրած,
Ծուղուած, վրդոված կանգնեցաւ իմքով,
Դաստակս բռնեց ձեռքով դողդոջուն,
Համակ դառնացած, արցունքոտ աչքով
Սրկա՛ր զիս դիտեց նուաղկոտ, տժգոյն։
«Վրէժ պիտի լուծես. չէ՞....հոգի՛ս։»
Այդ անմեղ հարցը այդ անուշ բերնէն
Զիս դլխիս եց ամբողջ. զգացի որ յիս
Խանդս կը խանձի գգացմանց վհէն։
Չհամբերեցի. փարեցայ վրդին
Վրէժխընդրութեան քաղցր արձանին,
Եւ չրթունքներէն վսեմ աղջկան
«Վրէ՜ժ» ծծեցի իր «Սէր»ին փոխան։

*
* *

Այդ օրէն ահա՛ կը պաշտեմ հոգւով
Անուշ Հակը Հայութեան փայլին.
Այդ ժամէն ահա՛ ուխտեր եմ սիրով
Վրէժներու է՛ն անգութն, սոսկալին։

ԹԻՐԱՑԻ

Ուսմունք 12/24 փետր. 1898

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալը.

L'UNIVERS ET SA FORMATION. Par N. DAGAVARIAN, Docteur en Médecine de la Faculté de Paris, Ingénieur agronome, licencié ès sciences naturelles. Constantinople. H. Mattéosian, imprimeur. 1898.

Տիար Տօքթէօր Տաղաւարեանի հրատարակած այս գիտական գիրք որ կը խօսի երկրիս կազմութեան և ընդհանրապէս տիեզերագիտութեան վրայ, կը բաղկանայ քառասնալ 104 եռեսէ և զարդարուած է նոյն նիւթի վերաբերեալ 25 պատկերներով։

Գինն է 2 ֆրանք Կ.պոլսի մէջ։

ԱՔՄԷՆԹԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պաքով. Պ. Ց. Թ. — Remboursementով *ունէ ծրար ղրկելու համար մանաւանդ ծախքերը կան որոնք պէտք է ապսպրողը վճարէ, կանխիկ ղրկելով մեզ. 25 սանթիմ իւրաքանչիւր ծրարի պատուիրուելուն* (recommandation) *ծախքն է. առաջին 50 կրամի կամ իր կոտորակի համար 10 սանթիմ, իսկ անոր յաջորդող իւրաքանչիւր 50 կրամի կամ անոր կոտորակի համար 5 սանթիմ փոստի ծախք՝ ղրկելու համար և 10 սանթիմ՝ ապահովութեան* (assurance) *տուրք. Նոյնպէս՝ վճարուած դրամարը մեզ փոխանցելու համար* recouvrementի *ծախքերը կան որոնք կը վերաբերին ապրանքը մեզ ապսպրողին։*

Հետեւապէս remboursementով *ձեզ ունէ ծրար ղրկուելու համար՝ պէտք է որ փոստային ծախքեր և ապսպրուածի արժէքին դոնէ մէկ մասնալ կանխիկ ղրկուած լինին։*

Համօնտ. C. H. M.ի լրագիրը ստացողներին. — *Եթէ այդ մարդ հեռացած է այդ տեղէ, փոստը մեզ կը վերադարձնէր անոր ղրկուած թերթը երբ ուրիշ մը չգտնուեր զայն ընդառաջող և մենք ալ զուր տեղ մինչեւ այժմ փոստի և այլ ծախքեր ըրած չեինք լիներ։ Ուրիշ լրագիրն ստանալը գոհութիւն կը լինի եթէ անոր բաժնորդագին չվճարուի։*

Տ. ՀԱՆՕԹՕ ԱԿԱԴԷՄԱԿԱՆ

Ֆրանսայի արտաքին գործերի նախարար Տ. Գարրիէլ Հանօթօ որ միևնոյն ժամանակ անուանի պատմագիր մ'է, Ֆրանսական Ակադէմիան անդամ ընտրուած էր։

Անցած չաբաթ Ակադէմիան մէջ իբրև անդամ իր ընդունուելու արարողութիւնը կատարուեցաւ։ Հանդիսականներուն մէջ կը գտնուէին նախարարներէ մեծ մասը որոնք իրենց պաշտօնակից այս գրական փառքի ներկայ գտնուելու փութացած էին։ Նոյն իսկ Հանրապետութեան Նախագահն ալ, Տ. Ֆէլիքս Ֆօր, գնաց իր ներկայութեամբ աւելցնել այդ հանդէսի փայլը։

Տ. Հանօթօ 40 անմահներու չարքին մէջ կը յաջորդէր Տ. Շալմել Լաքուրին որի վրայ խօսեցաւ իր ընդունելութեան ճառը սովորականին համեմատ։ Անոր կեանքի պատկերը նկարագրեց գեղեցիկ ոճով։

Տ. Հանօթօին ընդունելութեան ճառով մը պատասխանեց ակադէմականներէն Տ. Ալօկիւէ։ Անոր գրական և քաղաքական կենսագրութիւնն ըրաւ։ Տ. Հանօթօի գրական գործերի գլխաւորն է Րիշլիէօի մեծահատոր պատմութիւնը. այն Րիշլիէօ որ Լուի ԺԳի օրով Ֆրանսայի գրական և քաղաքական բարձրացման գլխաւոր գործիչներէ մին եղած է։ Նա հիմնեց նաև Ֆրանսական Ակադէմիան։

Հանդուցեալ Ժիւլ Սիմոնին Ակադէմիայի մէջ պարապ թողած աթոռին վրայ ալ բազմելու պատիւն ունեցաւ երկու չաբաթ առաջ կոմս Ալպէր տը Մէօն որ Երես փոխանակին ժողովին մէջ մեզ ի նպաստ խօսած ճարտարախօսն ճառերովը ծանօթ է Հայերուս։

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՐ, ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՕՈՒՆԱՍՏԱՆ

Վօլօի մէջ մի կաթոլիկ քահանայի սպաննուելու մասին, որի նկատմամբ գրած ենք Արմենիահ 56րդ թիւին մէջ, թիւրք կառավարութիւնը խոստացաւ գոհացում տալ երբ մի քննիչ յանձնաժողով երթալով իր հարցաքննութիւն կատարէ։ Յանձնաժողովը մարտ 24ին մեկնեցաւ Կ.պոլսէն։ Յանձնաժողովի անդամները նշանակուած են Ֆրանսական և հելլենական դեսպանների հաւանութեամբը։

— Հռովմէն կը հաղորդեն թէ պաշտօնական շրջանակներուն մէջ կը հաւատան որ Իտալիա Աւստրիայի և Անգլիայի օրինակին չպիտի հետեւի և անոնց պէս իր դօրքեր չպիտի քաշէ Կրէտէէն վասնզի Իտալիա Միջերկրականի մէջ մասնաւոր չահեր ունի ո. րոնք Աւստրիա և Գերմանիա չունին։ Իտալիա կը խորհի թէ ինք չկրնար չհաղորդակցուիլ կրէտէի խնդրով. հետեւապէս պիտի շարունակէ Ֆրանսայի, Ռուսիոյի և Անգլիոյի հետ մէկտեղ կրէտէի մէջ հանդարտութիւն և արդարութիւն տիրել տալու համար իր ջանքերը։

— Բէռլինէն Սրբոյ Պետերբուրգի «Նովոյէ Վրեմիա» լրագիրը կը պնդէ թէ Եւրկիոս իշխանի ընտրելիութեան հաւանութիւն տուող տէրութիւններն իրենց ջանքերը միացուցած են անոր ընտրելութիւն ընդունիլ տալու համար. սրովհետև կրէտական խնդիրը լուծելու միակ միջոցն այդ է։ Արդարև միևնոյն Եւրկիոս իշխանն է որ կրէտէի քրիստոնեաներուն կատարեալ վստահութիւն ներշնչելու համար պէտք եղած բոլոր յատկութիւնները միացուցած է իրեն վրայ։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Բ.Դուռը կը մերժէ վաւերացունել կաթոլիկ Մելքիթների պատրիարքին ընտրութիւնը։

— Առողջապահական խորհուրդը տեղեկութիւն ստացեր է թէ Մէքքէ երթալու համար Ճիտտէի նաւահանգիստն եղած հնդկաստանցի ուխտաւորներուն մէջ երկու հոգի ժանտախտէ բռնուած են։

ԾԱՑՐԱԳՈՒՆԴ-ԱՐԵՒԵԼՔԻ ԴՈՐԾԵՐ

Բէքինէն կը հեռագրեն մարտ 25ին. «Շան Թընկ նահանգի բնիկները կը յայտարարեն թէ բռնի ուժով պիտի դիմադրեն ամերիկեան երկաթուղիի շինութեանը։

«Կը հաստատուի որ Չինաստանի կայսրը ուղեր է գէնքի ուժով դիմադրել Ռուսիոյին. բայց դրամի նեղութիւնը և Լիհունկ Չանկի խորհուրդները փոխեր են իր մտադրութիւն։»

— Լոնտոնի «Թայմզ»ը կը գրէ թէ Բօրթ-Արթիւրին և Թալիէն-Վանին 25 տարի պայմանաժամով Ռուսիոյին տրուիլը մեծ հարուած մ'եղաւ անգլիական ազդեցութեան։ Պայմանագիրն ստորագրուեցաւ մարտ 27ին։ Դժբաղդաբար, կըսէ «Թայմզ», Ֆրանսա, Գերմանիա և նոյն իսկ Ճափոն համաձայնած են Ռուսիոյին հետ որով Անգլիա միևնոյն պիտի մնայ իր դիմադրութեան մէջ։ Ճափոն համաձայներ է Բօրթ-Արթիւրին Ռուսիոյէ դրաւուելուն, Ռուսիա ալ փոխադարձապէս խոստացած լինելով որ Քորէայի մէջ Ճափոնի դէմ հակառակութիւններ չհանէ։

— Հոնկ-Քոնկի «Թայմզ» լրագիրը կը մտացունէ թէ անգլիական «Պարֆլիըր» մարտանաւը մարտ 25ին Հոնկ-Քոնկէն ճանբայ ելեր է նակազաքի երթալու համար։ Հոնկ-Քոնկի նաւային կայարանին մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին. գործաւորներն աւելցուցած են և դիշեր ցերեկ կաշխատին։

— Թիէն-Ցինէն կը հեռագրեն մարտ 28ին թէ 2000 ռուս զօրքեր Բօրթ-Արթիւր հասած են և պատրաստ են ցամաք իջնելու։ Չինական զօրապետ Սինկ իր զօրքերով մէկտեղ Չին Զով քաշուեցաւ։ Ռուսերը տիրեցին հեռագրական գիծերուն։

— Ծովակալ Գոժոն որ Չինաստանի լուրերը գտնուող Ֆրանսական նաւատորմիղի հրամանատարութիւնն ստանձնեց, մասնաւոր հրահանգներ ստացեր է Հայնան կղզիին նկատմամբ։ Ծովային զօրքեր ղրկուեր են Մօնքէյ։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՄԻՍՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Մատրիտէն կը հաղորդեն թէ սպանիական կառավարութիւնը «Մէյն» չոգենաւի պայթելու գործը քննող սպանիական յանձնաժողովի տեղեկագիրը կրկին անգամ քննութեան առնելէ յետոյ այն եզրակացութեան եկեր է թէ պայթումին պատճառը այնչափ պարզ ու յայտնի է որ ենթադրութիւններ անելու անգամ տեղ չը մնար,

— կըսուի թէ Ֆրանսայի և Անգլիայի միջև համաձայնութիւն գոյացած է իրենց բարեկամական միջնորդութիւն առաջարկելու համար Միացեալ Նահանգներին և Սպանիոյ եթէ հանգամանքներն այնպէս բերեն որ իրենց միջամտութեան պէտք լինի։

— Միացեալ Նահանգներու նախագահ Տ. Մաք Քինլի «Մէյն»ի ազէտի քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը իր պատգամադրով մէկտեղ մարտ 28ին ղրկեց երեսփոխանական և Ծերակոյտ ժողովներուն։ Տեղեկագիրը կը յայտարարէ թէ ապացոյցներ չէ գտած ճըշդելու համար թէ ազէտին պատասխանատուութիւնը որի՞ն կը վերաբերի. բայց կըսէ թէ չոգենաւին ձախակողմը ջրին տակ գրուած մի ական պայթած լինելու է։ Տ. Մաք Քինլի իր պատգամագրի մէջ «Մէյն»ի բարեկամական այցելութեան համար Ֆուպա ղրկուելուն և ազէտի պատմութիւնն ընդլէն յետոյ, վերջաբանին մէջ կըսէ թէ «Զեմ տարակուսիր որ սպանիական ազգի արդարութեան զգացումները իրեն պիտի թելադրեն այնպիսի վարմունք մ'ունենալ լինչպէս որ կը պահանջեն երկու կառավարութիւններուն բարեկամական յարաբերութիւնները ու պատիւը. գործադիր իշխանութիւնն իրեն պարտք կը համարի իր ձեռք բերած արդիւնքը իմացունել ժողովիդ։»

Մատրիտի ամերիկեան դեսպանը ծանուցագրով մը մէկտեղ այդ տեղեկագրի օրինակը յանձնեց սպանիական կառավարութեան։ Եղած բանակցութիւնները յոյս կուտան որ պատերազմի առիթը կառնուի։

ԱՐՏԱՍՔԱՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Աթէնքէն կը հաղորդեն թէ Եորկիոս թագաւորը սպաննել փորձող Քարտիճէ յայտարարեր է հարցաքննիչ դատաւորին թէ իրեն վրայ գտնուած պայթուցիկ ռումբը Տելիեանիին համար էր։ Որոշուած էր որ եթէ թագաւորն սպաննելու փոր-

ձը յաջողէր, նախկին նախարարապետ տունը պիտի երթային և պայթուցիկ ռումբը հոն պիտի նետէին:

Ոչ մի փաստաբան յանձն չառաւ ջարդիմի պաշտպանութիւնը. դատարանը պարտաւորուեցաւ պաշտօնապէս մի փաստաբան նշանակել անոր համար: Ջարդիմի յայտարարեց թէ իրեն համար ոևէ պաշտպանութիւն անօգուտ կը համարի:

— Լուր տարածուած էր թէ լորտ Սալզպըրի իր հիւանդութեան պատճառով հրաժարական պիտի տայ. բայց այդ լուր հերքուեցաւ պաշտօնապէս:

— Սոֆիայի մէջ դատական մասնաւոր ատեան մը կազմուած է դատելու համար այն Պուլկարներ որոնք քանի մը ամիս առաջ Մակեդոնիա Շոխպի մէջ թիւրք պէյ մը — Ռեշիտ պէյ — և անոր մայրն սպաննած և յետոյ Պուլկարիա փախած լինելու ամբաստանութեան տակ կը գտնուին: Պուլկար կառավարութեան այս վարմունք չատերը զարմացուցած է:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Տեղական սովորութիւններին հաւմատ, տարեկան կանխավճարների ստիպողական պայմանաժամներէ մին լինելով Եւրոպացիներուն Զատիկը, կը խնդրենք մեր այն բաժնորդներէ որոնք դեռ պարտք ունին Արմենիայի բաժնորդագնի հաշուէն, չուտով հասցունել մեզ, որով թէ՛ իրենց պարտք կատարած կը լինին և թէ՛ գործին դիւրութիւն տուած:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

"ԱՐՄԷՆԻԱ,,Ի

ԺԳ ՇՐՋԱՆԻՆ

(1897 ՕԳՈՍՏՈՍ—98 ՅՈՒՆԻՍ)

Պայմանները դրուած են թերթին ճակատը «Բաժնորդագրութիւն» վերնագրին տակ:

Լոյս տեսաւ

ՐԱՖՖԻ

ՍԱՄՈՒԷԼ

պատմական վէպը

Ա. Բ. Գ. Գիրք

Հեղինակի վերջին պատկերով

Գինն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա, Բ և Գ. վերջաբանով և «կայծեր» հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնը շարունակւում է. երկու գրքի միասին բաժանորդագինն է՝ 10 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ կարժենան 14 շիլինգ:

Ցանկացողները թէ՛ Սամուէլի և թէ՛ Րաֆֆիի մեռ երկերի համար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi
270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

—Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմում տանել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելիրենց ծանուցումներ, ըստ լրագրական սովորութեան: Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի հակատը, տառերի չափ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանթիմ և 1 բոլորգրի համար 1 սանթիմ: 3 անգամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չընդունուիր:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Գարակատանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիները:

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱԳՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների սեղմ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով.*) Գինն (90 *անթմ.*) 1 ֆրանգ 20 *անթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՓԱՔԻՉԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ *յետ այբուբենաց աւարտելոց* (Սպառած)

Է. ԼԻՆԶԻ ՕՐԵՆՔԸ ՁԱՀԿԱՀԱՑԱՑԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ. Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ քնակիչներու թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է աւարտակին վերջը.*) Գինն 50 *սանթիմ* (35 *սանթիմ*):

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (*Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի էջ ը Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ուրիշ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ*) (1 ֆրանք): 1 ֆր. 40 *սանթիմ*

Ժ. ՎՐԷԺ (*Պուլկարիոյ մէջ Թիւրքերէ արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար*) (15 *անթիմ*), 20 *անթմ.*

ԺԱ. ԹՈՄԱՍ ՅՈՑԱՐԻՍ (*Ճունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւնները մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար*), (0,15 *սանթիմ*) 20 *սանթիմ:*

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատունը մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիները մէջ հաշուուած է նաեւ ղրկելու փոստի ծախքը:

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) *ատանալ ուղղողները պէտք է որ ամեն մէկ ծրարի* (մինչեւ 2 *քիլօ*) *համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն:*

Արտօսր Հայաստանի կամ Տեզկագիր Բալուայ, Քարբերդու, Ջարսանճագի, Ճապաղչուրի և Երզնկայու: Քաւելուած ըստ խնդրատնոց ազգասիրաց «Խրիմեան գաւառ»: Աշխատասիրեաց Պօղոս Ծ. Վ. Նազարեան: 2 ֆրանգ:

— ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ. (*Յատկապէս պատրաստուած Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայ գաղթականներուն կեանքի, ժամանակի և դրամի խնայողութիւն ընել տալու հարկ եղած դիւրութիւններն ընծայելու համար:*) *Աշխատասիրեաց Գեորգ Ռ. Թորոսեան. Տպագր. Նիւ Եորք, Էլիսա Խալաւ և ընկ. 1897:* Ամերիկա գնացող Հայերին և կամ արդէն հոն գտնուղներին համար շատ կարեւոր գիրք է: Գինն է 1 ֆրանգ և 25 *սանթիմ:*

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ (ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԿՐՏՈՒՊ ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ դիւզացի հովուէ պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական դործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովի նախագահ դառնալու, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներիդործունէութեանը մասին: Սկիզբը դրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթիւ:

Հեղինակը շատ իրաւամբ կը դրէ իր յառաջաբանի վերջ Թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ եթէ ընթերցողների հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի դիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ:»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ:

Ցարածելու համար մեծ քանակու-թեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի:

(Պարակատանի Հայերին համար 1 ֆրանգ է:)

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՔ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԱՑ ԱՊՂՂԱՐԻՈՑ

Այս հետաքրքրաշարժ գրուածը կը ներկայացունէ ընտանեկան սխոյր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբաւոյական մի հայր իւր տագտկածուած վարքուբարքով որչա՛փ չարիքներ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր արդու ձեռքով ապականուած և անհետացած է աշխարհէ: Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ):

ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐՔ

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթիւ 1894 Թուականին հրատարակուած այս միւծակ դիրքով և լուսատիպ (phototypique) *չքեղ պատկերի մեծութիւնն է 50×35 հարիւրորդամէթր և տպուած է 70×45 հարիւրորդամէթր քարտոնի* (carton) *վրայ այլ և այլ բնագրով: Մէկտեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները, անոնց գրէթէ ամենքի խմբագրապետների պատկերներովը:*

Գինն է 4 ֆրանք, ճանապարհածախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարսկաստանի համար 2 ֆրանք և 50 սանթիմ:

* * *

Գալէմքեարեան Հ. Գ. — Պատմութիւն Հայ լրագրութեան իւ սկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794–1860: Մէկ լուսատիպ պատկերով: Գինն է, ճանապարհածախքովը մէկտեղ, 2 ֆր. և 50 անթմ.:

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ դիրքը կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, արժէքը կանխիկ ղրկելով:

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲՈՑԱՆԻ ՊԱՏԿԵՐՔ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբոցանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը: Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant: François CARRIERE
Marseille.— Imprimerie et Papeterie du Midi
Quai du Canal, 9